



ԳՐԻՉԱ ՍՄԻՐՆԵԱՆ

## ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

**ԳՐԻՉԱ ՍՄԻՐՆԵԱՆ. «Այունիք. Պատմություն և հիշողություն», Երևան, «ԱՏՏԱՐԵՍ» հրատ., 2019, 608 էջ:**

Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանի «Այունիք. Պատմություն և հիշողություն» գիրքը պայմանականորեն կարելի է բաժանել

Այունիքի պատմության երեք դրվագների՝ 1905-1907 թթ., 1917-1920 թթ. և մասամբ խորհրդային քաղաքական բռնաձնշումների շրջանի առանձին պատմական դեպքերի, երևույթների մասին արիմիվային փաստաթղթերի տեղեկությունների՝ ամբողջացած դրանց մասնակիցների, ականատեսների և ազդեցության կրողների հուշագրություններով, հոդվածներով, վավերագրերով, բանավոր պատմություններով:

«Այունիք. Պատմություն և հիշողություն» գրքում Այունիքի պատմության հիշյալ դրվագները ներկայացված են տարբեր համամասնություններով և մանրամասնություններով: Գրքի կառուցվածքը գծային ժամանակագրություն ունի (մաս առաջին՝ «Կապանյան տարեգիրներ», վերաբերում է հիմնականում 1905-1910 թթ. կոնկրետ իրադարձությունների և հասարակական-մշակութային կյանքի առանձին դրսուրումների, մաս երկրորդ՝ «Զանգեզորի 1917-1921 թթ. Գոյամարտի էջեր», մաս երրորդ՝ «Գողթնը, Ղափանը և Արևիքը 1918-1921 թթ. Վավերագրերում», մաս չորրորդ՝ «Կապանյան դպրոցը. Գյուղաշխարհի դպրոցների թագն ու պսակը», ունի «սեփական ժամանակագրություն», որ ներառում է նաև 19-րդ դարավերջը, իսկ մաս հինգերրորդը՝ «Խորհրդային տարիներին անհետացած

\* Հոդվածը ներկայացվել է 22.11.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ.:

գյուղեր», բայց բուն շարադրանքը գծային չէ: Բոլոր հինգ մասերում անձանց և երևույթների հետ կապված նյութերը «մինչ», «հիմա» և «հետո» ունեն: Պարզապես հինգ մասից բաղկացած գրքի նյութերը՝ արխիվային փաստաթղթերը, հուշագրությունները և բանավոր պատմությունների միջոցով ներկայացված հիշողությունները, վերաբերում են Սյունիքի 20-րդ դարի պատմության հենց այդ դրվագներին: Սյունիքի քաղաքական պատմության 20-րդ դարասկզբի դրամատիկ դրվագները միմյանց հետ կապվում են բնակչության տնտեսական և հասարակական կյանքի մասին լրացուցիչ տեղեկություններով, բայց առանցքում միշտ հիշյալ ճակատագրական տարիներն են: Օրինակ՝ բազմաթիվ մարդկային զոհերի և բնակավայրերի ավերման, ոչնչացման պատճառ դարձած, հայթուրքական հարաբերությունների փխրուն հավասարակշռությունն ավերած 1905-1907 թթ. հայ-թուրքական կողմները 1917-1921 թթ. դրվագի հետ սույն գրքում կապվում են դրանց միջակայրում, բայց 1905-1907 թթ. իրավիճակի հետևանքով առաջացած չքավորության, սովի, հիվանդությունների և կողմների հիշողության բեռով: 1917 թ. Սյունիքի բնակչությունը 1917-1921 թթ.՝ հեղափոխական, հեղաշրջումների, նոր կողմների և պատերազմի տարիներ, քասով նոր փուլ մտավ այդ բեռով և այն դեռ չհաղթահարած: Քառու, որում մարդիկ պիտի «հարմարվեին» և փորձեին կյանքը շարունակելու լուծումներ փնտրել-գտնել-չգտնել տեղի բնակչության համար ոչ միշտ հասկանալի նոր դեպքերի, նոր զաղափարների, նոր իրավիճակի զարգացումներում, մինչև: Հայաստանում իրականացված բոլշևիկյան հեղաշրջումը եկավ, հաստատեց բոլորովին նոր իրականություն, նոր հավասարակշռություն, նոր լուծումների փնտրտուք:

Գրքում ներկայացված պատմության դրվագները, ուղիղ իմաստով, այդ ժամանակաշրջանների «Սյունիքի պատմությունը» չեն, դրանք Սյունիքի մարդկանց կյանքն են պատմության այդ շրջափուլերում: Առնվազն այսքանով այդ «որոշ դրվագների» պատմության շարադրանքը, դուրս գալով պատմության ստանդարտ, ավանդական չոր շարադրանքի շրջա-

նակներից, հավելում է պատմական դեպքերին մասնակիցների և կրողների շրջանակը՝ պատմության մեջ ներառելով այն, ինչը հաճախ անվանվում է «ժողովուրդ», «ժողովրդի պատմություն», բայց ավելի հաճախ լինում է քաղաքական կամ ռազմական, երբեմն նաև վարչական գործիչների և գործողությունների մասին տեղեկատվական կամ վերլուծական շարադրանք, իսկ «ժողովուրդը» դրանց իրական, բայց անտեսանելի մասնակիցն է: Այս գրքում «ժողովուրդը» գործընթացի տեսանելի մասնակիցն է: «Ժողովուրդն» այստեղ ներկա է որպես անհատ մարդ, գյուղացի, ունեոր, ազնվական, ուսալ, անգրագետ, չքավոր, հովիվ, կին, տղամարդ, երիտասարդ, տարեց, կռվող, հարձակվող, պաշտպանվող, նաև՝ որպես խմբի մաս՝ համազյուղացի, համերկրացի, գաղթական, հայ, թուրք, հաճախ՝ անուններով, անցյալով, ներկայով և ապագայով: Ճանապարհները փակ են, փոստը չի աշխատում, սուրհանդակները տեղ չեն հասնում, իսկ որոշում կայացնել պետք է՝ ի՞նչ անել թուրքերի հարձակման դեպքում. դիմադրե՞լ փախչե՞լ, հանձնվե՞լ, նախահարձա՞կ լինել, սպասե՞լ: Ինչի՞ սպասել հարձակմա՞ն, թե՞ հնարավոր կլինի պայմանավորվել, ո՞վ, ովքե՞ր են պայմանավորվելու ինչքա՞ն ժամանակով, վստահե՞լ, խարվե՞լ, խարե՞լ, ո՞րն է ճիշտ, ո՞րը սխալ. սրանք բոլորը դառնում են յուրաքանչյուրի, առանձին գյուղի բնակչության, չորս-հինգ մարդու, շրջանի... գործը: Նրանց կյանք մուտք են գործում նոր գործող անձինք՝ Կայծակ Առաքել, Սերաստացի Մուրադ, Անդրանիկ, Նժեկի, Խալիլ փաշա, նոր խմբեր՝ արևմտահայ և նախիջևանյան հայ փախստականների խմբեր՝ սոված, դժբախտ մարդիկ՝ նոր խնդիրներ առաջադրելով: Նրանց կյանքում նոր որակով են երևում իրենց շատ լավ ծանոթ, հայրենակից հին գործող անձինք՝ Սմբատ Մելիք-Ստեփանյան՝ Գրիշա Ստեփանյանի սիրելի հերոսը, նրա քույր Վարսենիկը, ուրիշներ: Պատմության շարադրանքում սա պատմություն է, պատմության կոնկրետ դրվագում սա մարդկանց կյանքն է, դժվար, բայց անխուսափելի առօրյան: Գործում են բոլորը՝ հաշվի առնելով անցյալի փորձը, օգտագործելով տեղական կապերը, փորձելով ինքնակազմակերպվել, քանի որ

հատկապես 1917-1920 թթ. ընթացքում այլ՝ պէտական կառավարման կազմակերպիչները կա՝ մ արդեն չկան, կա՝ մ բացակա են, կա՝ մ նրանց չեն հավատում, չեն վստահում: Եվ ուրեմն առաջանում են սեփական հասարակական կառավարիչները՝ տեղական ընտրովի «ազգային խորհուրդները», որոնք, ըստ Էռլիշյան, տեղական իշխանության բարձրագույն մարմիններն են դարձել՝ հոգևորականը, զինվորականը, մոլլան, ուսուցիչը, մելիքը, բեկը, արդարը, «ղաչաղը», ավագակը... Այս կամ այլ կերպ որոշումներ կայացնելիս մարդիկ հեռուն գնացող քաղաքական և ռազմական գործողությունների վերլուծության ժամանակ հնարավորություն, շատերը զիտելիք չունեն, նրանք գործում են ըստ իրավիճակի, այստեղ և հիմա, երբեմն՝ նույնիսկ միմյանցից անտեղյակ:

1918-1920 թթ., չնայած բազմաքանակ կուսակցական և այլ խմբերի առկայությանը, այսպիսին էր պատկերը համարյա ողջ Այսրկովկասի զավառներում: Հայերի համար՝ մասնավորապես: Ողջ Այսրկովկասում արևմտահայ փախստականները դեռ դեգերում էին օթևանի փնտրտուքով, Կովկաս մտած օսմանյան թուրքական բանակը առաջանում էր Վրաստանի և Հայաստանի ուղղությամբ, նրանց՝ որպես ազատարարների, դիմավորում էին կովկասյան թուրքերը, և զարնանից սկսվել էին Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ, Շաքի, Գեռլշա, Շամախի զավառների հայերի կոտորածները: Վրաստանում օթևանած արևմտահայ փախստականներն ամեն կերպ փորձում էին անցնել Ռուսաստան՝ Վլադիկավկազ, նրանց թվին ավելացել էին կովկասահայ փախստականները, կոտորածներ էին Զավախյում, որտեղից «տասնյակ հազարավոր մարդիկ, փրկություն որոնելով թշնամու կրակից, առևանգումներից և բռնաբարություններից, պոկվեցին իրենց հողից ու փախան դեպի Բորժոմի կիրճը, բայց այստեղ մատնվեցին կատարյալ բնաջնջման»<sup>1</sup>: 1918 թ. ամռան մասին գրող, պատմագիր Լեռն գրում է. «Կովկասահայերի համար նույնքան սարսափելի էր, որքան

<sup>1</sup> Ան, Անցյալից, Հուշագրություն, Երևան, 2009, էջ 366:

1915-ի ամառը թուրքահայերի համար»<sup>1</sup>: Ամենուր, որտեղ հայ-թուրքական հարևան կամ խառը բնակչություն էր, միմյանց դեմ կատարյալ թշնամական գրձողություններ էին Արարատյան դաշտում, Նախիջևանում, Ջանզեզուրում, Ղարաբաղում: Կոյվ-ներ և սով: 1918 թ. Ղարաբաղում սովի մասին Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամ Աբրահամ Կիսիբեկյանը գրում է. «Իմ հայրենի Սխսորաշեն «գյուղը», որը բաղկացած էր 250-260 տն-տեսությունից, 2-3 ամսվա ընթացքում զոհ տվեց դաժան սովին մեծ ու փոքր 226 հոգի: Կային այնպիսի տնտեսություններ, որոնցից մահացան 3-4 հոգի: Հայրենի գյուղի հինավորց գերեզմանատունը, որը գտնվում էր գյուղից մոտ 2 կմ հեռավորության վրա, ստիպված եղան թողնել այդ պապենական թանկարժեք հուշարձանները ու նրանց նախնիների շիրիմները և հիմք դնել նոր գերեզմանատան՝ գյուղին կից, որովհետև մարդիկ ուժ չունեին բազմաթիվ դիակները տեղափոխելու այդքան հեռավորության վրա գտնվող գերեզմանատունը»<sup>2</sup>:

Նույն էր պատկերը Սյունիքում, որի բնակչության ներքին հարաբերությունների պատմություն մտնում ենք սույն՝ «Սյունիք. Պատմություն և հիշողություն» գրքի միջոցով, որն ավելի շատ մարդկանց և սեփական կյանքերը փրկելու կամ ոչնչացնելու պատմություն է: Ժամանակավորապես Սյունիքի բնակչության աշխարհը կրկին բաժանվել էր երկու մասի հայերի և կովկասյան ու օսմանյան թուրքերի, ավելի ուշ՝ երեք մասի հայերի, թուրքերի և բոլշևիկների, երրորդ փուլում աշխարհը բաժանվել է բոլշևիկների և «դաշնակցականների», քանի որ որոշ շրջան եղավ, երբ կոյվներին մասնակցած բոլորը Հայաստանում համարվեցին «դաշնակցականներ», իսկ կոյվներին բոլորն էին մասնակցել՝ հարձակվել էին, պաշտպանվել, փախել, թալանվել և թալանել:

Ժամանակն է առաջարրում, թէ՝ օրինաշափորեն «առաջանում են» նաև ժամանակաշրջանը ներկայացնող սեփական

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 371:

<sup>2</sup>Կիսիբեկյան Ա, Հուշեր, հ. Ա, Երևան, 2011, էջ 251-252:

տարեգիրները՝ Ստեմել, Սուլթան Տեր-Գևորգյանց (Արքայիկ), Զանունի (Սահակ Ասծատրյան), Արտաշես Ծատրյան, Բագրատ Մինասյան, Ասծատուր Ղուկասյան, Շահեն Թորոսյան... Ամեն մեկը յուրովի գրանցում է իր տեսածը, իր մասնակցությամբ տեղի ունեցածը, և լավ է, որ դրանք հաճախ չեն հասցնում հղկել, «ավելորդը», «անցանկալին» դեն նետել, հարմարեցվել... Այստեղ կան հայեր և թուրքեր: Պատմական անցյալի հետևանքով նույն տարածքում հայտնված երկու ժողովուրդներն ել չքավոր են, երկուսն ել ծայրահեղ լարվածության են հասել կրիվների տարիներին, մարդիկ սոված են, վախեցած, զազազած, երկու ժողովուրդներն ել թալանում են և միաժամանակ վտանգի մասին միմյանց թաքուն լուր են տալիս, երկուսն ել դավաճանում են միմյանց, սպանում և սպանվում են, ասպետանում և ավազականում են երկուսից էլ, և երկուսն ել մոռանում են սեփական թալանը և հիշում, երկար ու մանրամասն հիշում իրենցից թալանվածը... Նրանք հասուցում են յոշոր քաղաքականության համար, որը պիտի «պատմություն» կոչվի:

Տարեգիրները կոնկրետ դեպքերի արձանագրողներ են, և դրանով նրանց ժառանգությունը լրացնում է նաև «պատմության խճանկարի» բաց մնացած վանդակները: 1918-ի սկզբին Թիֆլիսում ստեղծվել էր Ղարաբաղի և Զանգեզուրի հայրենակցական միություն, որի վարչության նախագահը գրող, բանասեր Լեռն էր: Լեռն գրում է. «Շուշիի տեղային ռուս զորաբաժինը երբ զինված գնալիս է եղել Եվլախ կայարանը՝ Ռուսաստան գնացող ռուս զորքերին միանալու համար, թուրքերը ճանապարհին շրջապատել էին նրան և զինաթափ արել: Այսպիսով՝ թուրքերը զենքի կողմից գերազանցող դիրք էին բռնել հայերի վերաբերմամբ, որոնց ինքնապաշտպանության միջոցները շատ թույլ էին: Այս դրությունը միտք էր ծնեցնում զինվորական ծառայության մեջ եղած հայերից Ղարաբաղում կազմել մի գունդ և նրան հանձնել Ղարաբաղի պաշտպանությունը: Պետք էր միայն Թիֆլիսի պահեստներից զենք և ռազմամթերք ուղարկել Շուշի: Այսպիսի վճիռ արդեն կայացրած է եղել Անդրկովկասի կոմիսարիատը, բայց, որովհետև Գանձակի և Եվլախի ճանապարհները

կտրված էին, որոշումը մնացել էր անկատար: Մեր հայրենակցական միությունը հանձն առավ կազմակերպել այդ գործն այնպես, որ զենքն ու պատերազմական ծանրոցները Շուշի փոխադրվեն Նոր Բայազետի գավառի վրայով, ուսկից հաղորդակցություն կա Խաչեն գավառի հետ, և այնտեղից Շուշի: Գործը հանձնվեց զինվորականներին, բայց իրականացումն այնպես հեշտ չեղավ, ինչպես ենթադրվում էր: Նոր Բայազետի գավառում մեր քարավանը տեղական բուրքերի հետ ընդհարում է ունենում և, չկարողանալով ուղևորվել դեպի Խաչեն, ստիպված է լինում ավելի երկար ճանապարհ բռնել՝ Դարալազյազի վրայով Զանգեզուր՝ այնտեղից էլ Շուշի գնալու համար: Սակայն հազիվ չորս ամսվա ընթացքում քարավանը դուրս է գալիս Գորիս: Այդտեղ էլ մնում են բոլոր գենքերն ու մթերքները և տեղական պետքերի վրա գործածվում: Անդրանիկն այդ նյութերով է կազմակերպում Զանգեզուրի զինվորությունը: Եվ այսպիսով ստեղծվում է անհավասար կացություն երկու լեռնային երկրների համար: Զանգեզուրի հայությունը լավ զինվում է և ուժեղանում, իսկ Ղարաբաղի հայությունը, ընդհակառակն, մնում է շատ թույլ պաշտպանված, և այս թուլությունը նրան հետագայում շատ է վնասում<sup>1</sup>: Մինչ Թիֆլիսից ուղարկված զինամթերքը չորս ամսվա տառապանքներով հասցել են Գորիս, ստորագրվել էր Բաթումի պայմանագիրը, օսմանաադրեցանական թուրքական զորամիավորումներն արդեն զգալիորեն ամրապնդվել էին Ղարաբաղում և ամեն ինչ անում էին Ղարաբաղը Զանգեզուրից մեկուսացնելու համար: Լեռն չի գրում, բայց Թիֆլիսից ուղարկված զինամթերքը Գորիս հասնելուց հետո՝ սեպտեմբերին, Շուշիից սայլեր են ուղարկվել դրանք տեղափոխելու համար: Ճանապարհին Ղարաբաղը Զանգեզուրին կապող հայկական Բերդաձոր-Ղարաղլաղ գյուղում թուրքական զորամիավորների հետ բախում է եղել, վատ զինված և փոքրաթիվ հայերը պարտվել են և վերադարձել Շուշի, իսկ մեծ և շեն Բերդաձորը դատարկվել է հայ բնակչու-

<sup>1</sup>Լեռ, նշվ. աշխ., էջ 385-386:

թյունից, հայերը տեղափոխվել են Շուշի՝ ավելացնելով հայ փախստականների թիվը: Այս հենց այս դեպքերն է Նկարագրում դրանց մասնակից և ականատես Ասծատուր Ղուկասյանն իր «Բերդաձոր-Ղարաղլաղի կոփվն ու ավերումը» հիշատակարանում, որի ձեռագիրը պահպում է Կապանի երկրագիտական թանգարանում, և սույն գրքում հրապարակում է Գրիշա Սմբատյանը՝ որպես «Ղարաբաղի 1918թ. իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր աղյուր»: Զինամթերքը Գորիսից Շուշի հասցնելու այս գործողությանը շատերն էին դեմ և կանխատեսում էին Զանգեզուրից Ղարաբաղ կապն ապահովող վերջին ճանապարհի փակվելը, ինչը և դարձավ իրականություն<sup>1</sup>: Այլս ոչ մի հնարավորություն չմնաց Գորիս հասած զինամթերքը Ղարաբաղ տեղափոխվելու: Ինքը՝ իրադարձության մասնակից, հիշատակարանի հեղինակ Ասծատուր Ղուկասյանը, կարծում է, որ գործողությունը վատ էր կազմակերպված, չին հաշվարկվել վտանգները, և մասնակիցներն էլ թեթևամտորեն էին ընտրվել. «Հին, փորձված հայրուկ Զիջուց Ասծատուրը համարում էր, որ մեր երթը անհաջող է, որ ճանապարհը լեցուն է վտանգներով և շարունակ զգուշության կոչ էր անում: Մի քիչ հանգստանալու ժամանակ ես կարողացա իմանալ, որ մեր էքսպեդիցիայի կազմում կա մոտ 50 հոգի անպետք բախտախնդիր մարդ Շուշի քաղաքից: Կային լավ տղերը Մարտակերտի շրջանից: ...Միմիայն մի մարդ կար այստեղ, որ եկած էր իսկապես մաքուր սրտով, այդ գործի հաջողության համար: Բայց ափսոս, որ մենակ էր: Դա էր Շուշի քաղաքացի Զիջուց Ասծատուրը՝ 50-55 տարեկան: Նա յուր նման հայդուկների հետ, եթք 1917-ին Տաճկահայաստանում զորքը թողեց ֆրոնտը, ինքն էլ կամավորական խմբերի հետ վերադարձավ Շուշի: Անհանգիստ էր: Կամավոր մասնակցեց մեր արշավախմբինե: Արդյունքում թե՝ զինամթերքը Ղարաբաղ չհասավ, թե՝ կորցրին Ղարաղլաղ

<sup>1</sup>Տե՛ս Կիսիբեկյան Ա., «Ղարաղլաղ գյուղի նշանակությունը Զանգեզուրի և Ղարաբաղի համար ու նրա ավերումը» բաժինը, էջ 344-347:

գյուղը, դրանով նաև Զանգեզուրի հետ Ղարաբաղի հարաբերականորեն հուսալի կապի հնարավորությունը:

1918թ. հուլիսից Զանգեզուրը լցվել էր նաև Նախիջևանից փախստական հայերով: Սովոր և կոփվներից հյուծված պունեցիների համար սա լրացուցիչ դժբախտություն էր, բայց սա առաջին հերթին հենց փախստականների համար էր դժբախտություն: Մեր պատմագրությունը հարուստ չէ այս փախստականների ճակատագրի մասին տեղեկություններով: Բայց Սյունիքի տարեգիրները և Գրիշա Սմբատյանի գրանցած բանավոր պատմությունները որոշ չափով նոր աղբյուր են նրանց մասին: Տարեգիրներից Գ. Սմբատյանը հղում է «Հայրենիք»-ում 1963-ի փետրվարին հրատարակված Ստեմելի «Զանգեզուրի հերոսամարտը և Արսեն Շահմազյանե հոդվածը. «Օխչու ձորի թրբութիւնը, տաճկական վաշտերի ներկայութիւնից ոգեւորուած, չէր ուզում լսել Ղափանի հայոց ազգային խորհրդի արդարացի պահանջը եւ շարունակում էր զոց պահել Ղափանի ու Գողթանի միջև ընկած ձորերի ճամբան եւ շարունակում էր ոչնչացնել դեպի Զանգեզուր եկող հայ գաղթականներին, որոնց զրիւ թիւը հազարների էր հասնում: Այդ պատճառով Ղափանի Ազգային խորհուրդը ստիպուած եղաւ խիստ միջոցների դիմել՝ տեղական զինուրական ոյժերը շարժման մէջ դնելով: Եւ շնորհի Աբգար Նասիբեանի, Գերասիմի, Նաւասարդի, Կարապետ Նուրիջանեանի եւ Երիցվանիկ գիւղացի Գրիգոր Տէր Յարութիւնեանի հերոսական ջանքերին, վերացաւ Օխչու մէջ տեղից եւ դադարեց վտանգ լինելուց Վերին Ղափանին»: Ինքը Գրիշա Սմբատյանը, լրացնում է այս տեղեկությունը. «Գողթանից Ղափան անցնող հայ գաղթականներին շրջապատում և կոտորում են կիբճերում ու ձորերում: Ղափանցիները չեն մոռանում Սանչարակի ձորում տեղի ունեցած աղետը: 1918թ. Գեղվածորի թուրքերը Կապուտօնի բարձունքներում դավադրաբար շեղեցին շուրջ 2000 գողթնեցի հայ գաղթական՝ ուղին, ապա Սանչարակի ձորում շուրջկալեցին ու ոչնչացրին՝ տիրանալով նրանց խղճուկ ունեցվածքին... Վերին ձորի թուրքերի կողմից գաղթականության անխնա կոտորածի հետ

կապված հիշողությունների վրա տարու էր դրված: Խորհրդային տարիներին այս մասին լրելը պարտադրված էր:... Մի քանի կցկտուր գրույցներ պահպանվեցին, ումանք զանգվածային թաղումների տեղը ցույց տվին, բայց դրանք ոչինչ տալ չէին կարող: Տասնյակ տարիներ անց Բորիս Համբարձումյանը՝ բանհմաց ու հայրենի եզերքի նվիրյալ լեռնաձորցին, ներկայացնում է իր և Հաչարին գյուղից Ալի Նամազովի միջև կայացած մի գրույցը: Բորիսն զգուշորեն հետաքրքրվել է կզնութցիների ճակատագրով, որոնք եկել հասել էին Գեղվածոր: Ալին խուսափողական պատասխաններ է տվել, բայց մի օր բացվել է. «Հայ զադժականներին կոտորել են ոչ միայն Սանչարակում, նրանց սպանեցին նաև մեր գյուղում: Կզնութցիները՝ ահել, ջահել, կին ու երեխա, իրենց գրաստներով, ունեցվածքով, եկել հասել էին Կապուտջուղի զագաթը: Այստեղ հանդիպում են նրանք մի հովվի, որ զադժականների հարցերին պատասխանում է մաքուր հայերենով ու մոլորենում նրանց: Գադժականների այն հարցին, թե որ ուղղությամբ իջնեն հայկական գյուղեր, հովիվը ցույց է տալիս Գեղվածորի ճանապարհը: Այն, որ կզնութցիներին զանգվածաբար կոտորել են Սանչարակում, դա կասկածի ենթակա չէ: Բայց Ալի Նամազովը պնդում է, որ մի մեծ խմբի ոչնչացրել են իր ծննդավայր Հաչարինում: Սա նշանակում է, որ կոտորածը եղել է երկու վայրում: ...Այսօր դժվար է որոշել թե՝ Սանչարակի և թե՝ Հաչարինի զանգվածային թաղման վայրերը: Բայց գտնել, խնկարկել է պետք, նրանց հոգիներին հանգստություն է պետք: Ժամանակին այդպես է վարվել Գդիչը... Ըստ Ռոբերտ Էջանանցու գրի առած պատմության Գդիչը Կապուտջուղի Թթու ջրում փնտրեց ու գտավ մորթված ու կողոպտված այրի հայուհուն և փոքրիկ տղային: Սպանել, խլել էին շալակած աղը: Աղբյուրի մերձակայքում նա հողին հանձնեց դժբախտներին, խունկ ծխեց ու, իհարկե, ամիսներ անց դաժան վրեժ լուծեց անմեղ զոհերի համար»: Գդիչին «շնորհակալ եղանք» նրանով, որ 1937-ին զնդակահարվեց ՆԳԺԿ նկուղներում: Իսկ փախստականների կոտորածի մասին լրեցինք, մոռացանք՝ «ժամանակներն էին այդպիսին»:

1920-1921-ին Սյունիքի ժողովուրդն արդեն բազմաձակատ կրիվներ ուներ: 1920-ի ամռանը տեղական թուրքերին միացան ռուս, օսմանյան թուրք, կովկասյան թուրք «բոլշևիկներ»: Թևակոփում էր քաղաքական լենինաքեմալական համաձայնությունների փուլը: Հայաստանի դեմ պատերազմ սկսող Մուստաֆա Քեմալի՝ Նախիջևան հասած Քյազիմ Կարաբեքիրի գլխավորած «բոլշևիկյան զորքերին» զենք պիտի մատակարարվեր Խորհրդային Ռուսաստանից, բայց Սյունիքը խանգարում էր: Սյունիքը խանգարում էր Հայաստանի դեմ պատերազմ սկսելուն: Որպես նոր որակի դերակատար է հանդես գալիս նաև խորհրդայնացված Աղրբեջանը՝ արդեն երկու փաստացի դաշնակիցներով՝ քեմալական Թուրքիա և Խորհրդային Ռուսաստան: Սյունիքում հայտնվում է ռուս-աղրբեջանական կարմիր բանակը: Երիտթօնուրքերի Խալիլ բեկը փոխարինվում է քեմալական Կարաբեքիրով: Աշխարհաքաղաքական նոր ընթացքը այսունեցիներին դրել էր կրկնակի ծանր վիճակում՝ պաշտպանվել արևելքից և արևմուտքից հարձակող թուրքերի դեմ, կովել Սյունիքի թուրքերի դեմ, կովել Զանգեզուրը Աղրբեջանին հանձնելու ծրագրերով բոլշևիկների դեմ:

Նոր խորհրդայնացված Աղրբեջանը մայիսի 20-ին Իջևանի կողմից խորհրդային բանակի երկու զինված հեծյալ գունդ է մտցնում Հայաստանի Հանրապետության տարածք<sup>1</sup>, և Կարմիր Բանակի զորամիավորումներ ուղարկում Ղարաբաղ<sup>2</sup>, ինչպես նաև հայտարարում, որ Զանգեզուրից ու Ղարաբաղից զատ պետք է Աղրբեջանին հանձնվի նաև Շարուր-Դարալազյազը<sup>3</sup>:

<sup>1</sup> АВПР (Архив Внешней Политики Российской Империи [Москавская календарная архивная библиотека] русскоязычный архив) (ажунтнен `АВПР), ф.148, գ.3, թղթ.1, գ.3, թ.2, Պատմեն (Հրատարակված է **Барсегов Ю. Г.**, Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, том 2, часть 1 [Բարսեղով Յովան, Հայերի ցեղասպանությունը: Թուրքիայի պատասխանատվությունն ու աշխարհի հանրության պարտավորությունները], հ.2, մաս 1], էջ 58 (այսունեւ ` Барсегов, Էջ...), - <http://www.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0648-0685.htm#680>

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 200, Գ.427 (2-րդ մաս), թթ. 305-306 (Барсегов, էջ 62-66), - <http://www.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0686-0718.htm>:

<sup>3</sup> РГАСПИ (Российский Государственный Архив Социальной-Политической Истории [Універсальна архівна бібліотека Університету соціальної історії])

1920-ի հունիսի 19-ին Կովկասյան բոլշևիկներից Ստալինի խումբը համարվող Ադրբեջանի հեղկումի նախագահ Նարիման Նարիմանովը, Կովկասյան երկրամասային գործադիր կոմիտեի անդամ Բ. Մղիվանին, Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտկոմի անդամ Ա. Միկոյանը և Ռուսաստանի կոմունիստական կուսակցության հայկական կոմիտեի անդամ Ա. Նուրիջանյանը հեռազիր են ուղարկում Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինին՝ անվերապահորեն պահանջելով «...արդեն խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ մտած իբրև թե վիճելի Զանգեզուրն ու Ղարաբաղը {ձանաշել} անվիճելի եւ {ընդունել}, որ այսուհետեւ պետք է մնան Ադրբեջանի սահմաններում»<sup>1</sup>: «Արդեն Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ մտած» Ղարաբաղն ու Զանգեզուրը շարունակում են զինված դիմադրությունը: Նույն հունիսի 19-ին Գ. Չիչերինը ստանում է նաև Ռուսաստանի կոմունիստական բոլշևիկյան կուսակցության կովկասյան բյուրոյի և հեղափոխական ռազմական խորհրդի կովկասյան ճակատի անդամ Ս. Օրջոնիկիձեի հերթական հեռազիրը. «Ադրբեջանը հավակնում է Ղարաբաղին, Զանգեզուրին, Նախիջևանին և Շարուր-Դարձագյազին: Ղարաբաղում և Զանգեզուրում հոչակվել է խորհրդային իշխանություն (???-Հ.Խ.), և հիշյալ տարածքներն իրենց համարում են Խորհրդային Ադրբեջանի Հանրապետության մաս: Նախիջևանն արդեն մի քանի ամիս գտնվում է մահմեդական ապստամբների ձեռքին: Շարուր-Դարձագյազի

(այսուհետ՝ РГАСПИ), ф. 85, з. 13, к. 32, л. 1-2. Ձեռագիր, Բնօրինակը (Հրատարակված է Нагорный Карабах в международном праве и мировой политике (Документы и комментарии), том 1, сост., отв.ред., комментарии **Барсегов Ю.**, Москва, «КРУГ», 2008 [Լեռնային Կարաբաղ միջազգային իրավունքով և համաշխարհյան քաղաքականությունով (Փաստաթղթեր և ճանորդագրություններ), Հասոր 1, կազմ., պատ. խմբ. ճանորդագրեց Բարսեղով Յ.], Սոսուկվա, «ՎՐՈՒԳ», 2008], էջ 447):

<sup>1</sup> РГАСПИ, ф.17, г. 84, к. 72, п. 8 (Հրատարակված է Нагорный Карабах в международном праве, № 457-458):

զավարի մասին տեղեկություններ չունեմ: Աղքաքեջանը ոչ մի կերպ չի կարող առանց Ղարաբաղի և Զանգեզուրի մնալ»<sup>1</sup>:

Այս խնդրի շուրջ բազմաթիվ գրագրություններից ուշագրավ է Սերգո Օքոնիկիձեի 1920-ի հուլիսի 3-ի հեռագիրը Չիչերինին այն մասին, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը անհապաղ պետք է ճանաչել Աղրբեջանի կազմում, «...դրանք վիճելի թողնելու դեպքում անկասկած գրավվելու են թուրքերի կողմից, և ողջ հայ բնակչությունը կոտորվելու է: Մենք դա ոչնչով կանխել չենք կարող»<sup>2</sup>: Տարօրինակ է, թե ինչու, որ տրամաբանությամբ պիտի թուրքերի կողմից «անպայման կոտորվող» բնակչությունը «ինքնորոշվեր» Աղրբեջանի կազմում մնալու: Բայց այդպիսի մանրությունը չին կարող հեղափոխականների միտքը գրադեցնել: Պե՞տք է «ինքնորոշված» հայտարարել կիայտարարեն, պե՞տք է ապստամբ հայտարարել՝ կիայտարարեն: Զանգեզուրն ու Ղարաբաղը Աղրբեջանին «անմիջապես չտալու դեպքում» դրանց «ողջ հայ բնակչությունը կոտորվելու է», սպառնալիքը, իհարկե, կարելի է նաև ոչ թե ակնհայտ երևույթի կանխատեսում, այլև շանտաժի վորձ համարել, քանի որ հենց նույն պահին արդեն խորհրդայնացված Աղրբեջանում շարունակվում էին հայերի կոտորածները, և ո՛չ Աղրբեջանի, ո՛չ Շեուսաստանի բոլշևիկ իշխանությունները ոչինչ չին անում դրանք դադարեցնելու ուղղությամբ:

Մինչ Ռուսաստանի և «կովկասյան» բոլշևիկները ելքեր էին փնտրում Ալբրեշտանին Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի պատկանելության խնդիրը լուծելու, քեմալական թուրքական բանակը մտնում է Նախիջևան: Հուլիսի 7-ին Օրջոնի-

<sup>1</sup> РГАСПИ, ф. 85, г. 13, к. 32, п. 3. Պատճեն (Հրատարակված է Հայոց Կարախ մասնաւոր իշխանության կողմէ) կազմությունը պահպանության մեջ է գտնվում: Վայս պատճենը պահպանության մեջ է գտնվում:

կիձեն հեռագրում է Լենինին, Ստալինին և Չիչերինին՝ տեղեկացնելով, որ «Նախիջևանը, Օրդուրադը և այս շրջանի հյուսիսային մասը գրավված է Բայազեթի 9 հազար սվին հաշվող դիվիզիայի կողմից... Ես խորապես համոզված եմ, որ Ադրեցանում խորհրդային իշխանությունը ամրապնդելու և Բաքուն պահելու համար պետք է միացնել Լեռնային Ղարաբաղը եւ Զանգեզուրը: Այս շրջանի հայերի անվտանգությունը Ադրեցանը զիստվ է երաշխավորում»<sup>1</sup>: «Ու՞մ զիստվ» եր երաշխավորում Խորհրդային Ադրեցանը հայերի անվտանգությունը, երբ զիստվոր վտանգն ինքն էր:

Հուլիսի 7-ին կամ 8-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Լենինի քարտուղարներից մեկին՝ Ստալինի տիկնոջը՝ Ն. Ալելյուսային. «...Վաղը ես մեկնում եմ Բաքու: <...> Որտեղ է այժմ Ստալինը: «Ստալինին պետք է ասել», որ իմ առաջարկությունն անհրաժեշտ է ընդունել: Ինձ և առհասարակ մեզ բոլորիս շատ է հետաքրքրում նրա կարծիքն այս հարցի մասին... Նրան հաղորդեք, որ Չիչերինն ու Կարախանը (հայազգի Լեվ Կարախանը Չիչերինի տեղակալն էր - Հ.Ի.) ինձ կրկին դնում են անելանելի վիճակում: Նրա պատասխանն ինձ հայտնեք մինչև մեկնելս»<sup>2</sup>: Ստալինը, ի պատասխան Օրջոնիկիձեի հարցման, հուլիսի 8-ին հեռագրով տեղեկացնում է «իր կարծիքը». «{...} Իմ կարծիքով պետք է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ դեպքում, իհարկե, Թուրքիային Ադրեցանի հետ միասին: Ես խոսել եմ Լենինի հետ: Նա չի առարկում»<sup>3</sup>: Սա կարծիք չէր, դիրքորոշում էր և հրահանգ, որին «Լենինը չի առարկում»: Պարզ է, թե ինչու հաջորդ օրը՝ հուլիսի 10-ին, կովկասյան բոլշևիկների ստալինյան «փունջը»՝ Ադրեցանի հեղկումի նախագահ Նարիմանովը, Ռուսաստանի կոմկուսի

<sup>1</sup> ГАРФ, ф. 130, г. 4, д. 496, п. 141. Պատճեն, РГАСП, ф. 85, г. 3с, д. 2, п. 8-9. Պատճեն (Հրատարակված է Нагорный Карабах в международном праве, № 473-474):

<sup>2</sup> РГАСПИ, ф. 558, г. 1, д. 4018, п. 1-2. Պատճեն, ГАРФ, ф.130, г. 4, д. 496, п. 142а. Բնօրինակի փոստպատճեն Ստալինի ստորագրությամբ (Հրատարակված է Нагорный Карабах в международном праве, փաստաթուղթ № 472, № 474):

<sup>3</sup> ГАРФ, ф. 130, г. 4, д. 496, п. 139 (Нагорный Карабах в международном праве, փաստաթուղթ № 473, № 474):

կովկասյան բյուրոյի անդամ Մդիվանին, Աղքբեջանի կոմկուսի կենտլումի անդամներ Միկոյանը, Նանայշվիլին, 11-րդ Կարմիր բանակի հեղափոխական ռազմական խորհրդի անդամներ Վեսնիկը, Լևանդովսկին, Միխայլովը, ևս մի «հույժ գաղտնի» երկարաշունչ նամակ են ուղարկում Մոսկվա՝ պահանջելով Ղարաբաղի և Զանգեզուրի շուտափույթ կցումը Աղքբեջանին<sup>1</sup>, և նույն հուլիսի 10-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Լևանդովսկին տեղեկացնում է Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Կիրովին, որ Կարմիր բանակը մտել է Զանգեզուր<sup>2</sup>: 1920-ի հուլիսի 12-ին Թուրքիայից ուղարկված բանագնացը՝ ումն Շարիֆ Յունուս, Բաքու հասնելով, տեղեկացնում է, որ թուրքական կողմը շուտով կսկսի Հայաստանի դեմ պատերազմը, իսկ առաջմ միայն գրավել են Հայաստանի դեմ ճակատի կարսոր մարտավարական դիրքերը և, Մոսկվայից տեղեկություն ստանալով, որ այդ գրավումը ժամկետից շուտ է եղել, կանգ են առել: Բանագնացը տեղեկացնում է Քյազիմ Կարաբեքիր փաշայի «վճռական խնդրանքն» այն մասին, որ մինչ հիմնական գործողությունների ծավալումը, «եղբայրասպան գործողությունները դադարեցնելու համար», Կարմիր բանակը գրավի Ղարաբաղը և կապվի իր հետ: Խնդրանքը խիստ պնդողական է<sup>3</sup>: Քյազիմ Կարաբեքիրի «խիստ պնդողական խնդրանքն» արդեն պահանջ էր: «Եղբայրասպան

<sup>1</sup> Архив ЦК КПСС (Архив Центрального Комитета Коммунистической Партии Советского Союза [ԽՄԿԿԿ] Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի արխիվ), գ. 44-33-ա, թ. 72-73 (Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992 [Լեռնային Ղարաբաղ 1918-1923 թթ., Երևան, 1992], ф.ատաթուլք № 367, Нагорный Карабах в международном праве, էջ 478-479):

<sup>2</sup> РГВА (Российский Государственный Военный Архив [Խուսաստանի պետական ռազմական արխիվ]), ф.195, գ.3, գ.296, թ. 8, 9, 10; ЦГАСА(Центральный Государственный Архив Советской Армии [Խորհրդային բանակի պետական կենտրոնական արխիվ]), ф. 195, գ. 1, գ. 296, թ. 9. (Հրատարակված է Нагорный Карабах в 1918-1923 гг. ф.ատաթուլք № 366; Нагорный Карабах в международном праве, էջ 477).

<sup>3</sup>Տե՛ս ԱՐԱ (Центральный Государственный Архив Советской Армии [Խորհրդային բանակի պետական կենտրոնական արխիվ]), ֆ.195, գ. 3, գ. 945, թ. 123 (հրատարակված է Нагорный Карабах в 1918-1923 гг., ф.ատաթուլք № 370; Нагорный Карабах в международном праве, էջ 480):

գործողություններն» արդեն իսկ ծավալվում էին ողջ թափով. Զանգեզորը և Ղարաբաղ էր մտել ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակը, այլև Խորհրդային Ադրբեջանի բանակը<sup>1</sup>:

1920-ի սեպտեմբերի 1-ին Ռուսաստանի բոլշևիկյան կոմիտասի կենտրոնական կոմիտեի և ռազմահեղափոխական խորհրդի կովկասյան ճակատի անդամ Ս.Օքզոնոկիձեն Խորհրդային Ադրբեջանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Նարիման Նարիմանովին ասում է. «Քանի որ գրավելու են մեր զորքերի կողմից, դրանք այսպես թե այնպես պետք է լինեն ադրբեջանական... Աշխարհում ոչ ոք ի վիճակի չէ խանգարել մեզ՝ ազդել Ադրբեջանին միանալու այդ տարածքների բնակչության որոշմանը»<sup>2</sup> (ընդգծումը իմն է Հ.Ի.):

Ո՞չ Ղարաբաղի, ո՞չ Զանգեզորի բնակչությունը, իհարկե, Ադրբեջանին միանալու որոշում չունեին, երկուսն էլ դիմադրում էին: Սա բոլշևիկյան սովորական կեղծիքն էր: 1920թ. հոկտեմբերին, եթե շուրջ 800 կարմիրբանակայիններ Գորիսից շարժվեցին Ղափանի ուղղությամբ, գիշերը Արծվանսիկ գյուղի մոտ նրանց զինաթափեց Նժդեհի կարսոր զինվորներից Գերասիմ Աթաջանյանի փոքրաթիվ ջոկատը: Հետագայում նա շատ թանկ պիտի վճարեր իր հայրենիքի պաշտպանության համար, ինչի մասին պատմում է Գրիշա Մբատյանի սույն գիրքը:

Այսպես կրչված Կարմիր բանակը Սյունիքում հասցրել էր իրեն պահել վերջին թալանչու և ավազակի նման: Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչ Բորիս Լեզրանը նոյեմբերի 28-ին Չիչերինին ուղարկված հեռագրում վերլուծում է ստեղծված իրավիճակը, դժգոհում հայթուրքական պատերազմում կովկասյան թուրքերին մասնակից դարձնելու կապակցությամբ. «Ադրբեջանում մեր ռազմական քաղաքականությունը շարունակում է նախկինում իմ կողմից

<sup>1</sup>Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, գ. 1, գ. 38, թ. 123 եւ շրջ. (Հրատարակված է Հայոց Կարաբախ 1918-1923 թ. փաստաթուղթ № 371; Հայոց Կարաբախ մայնական պարագաների մասին օրենք, էջ 482).

<sup>2</sup>ՐԳԱԾՊԻ, ֆ. 64, գ. 1, գ. 17, թ. 79-81 (Բարսեղօվ, էջ 160-161,- <http://www.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0795-0837.htm#813>)

անընդհատ ներկայացված սխալները, բայց որևէ քայլ չի արվում դրանք վերացնելու: Զանգեզուր են նետվել թաթարական Կովկասեան թուրքեր, ետնազոյն աղբբեջանցիներ} զորամիաւրումներ, դրանց հետ, անմտաքար, նաև թուրք գերիներ, որոնք շարդել են զուղերը: Արդյունքում՝ ողջ բնակչության ըմբուտացում, որից շատ դժվար է գլուխ հանել... Նախիջևանում նոյնպէս մեր ջոկատը երկար ժամանակ թուրքերի հետ միասին Օրդուրադում գործում էր զանգեզուրցիների դէմ: Հենց հիմա, ըստ համառ տեղեկությունների, Շախտախտի կայարանում կրկին թուրքերի հետ միասին {ոուսական ջոկատը} մասնակցում է Հայաստանի դէմ գրոհներին: Եվ դա արևում է այն ժամանակ, երբ մենք հանդես ենք գալիս միջնորդի դերում... Լավ տոնի նշան է դարձել Հայաստանի դէմ ցանկացած պատերազմ, Կարարեքիրի բանակների գրոհը որպէս խորհրդային իշխանության և Կոմունիստական Կուսակցության աջակցությունը վայելող հեղափոխական ակտ ներկայացնելը: Ալեքսանդրապոլում հայ կոմունիստները նոյնիսկ կոչեր տարածեցին՝ ողջունելով դաշնակցականներից հայ ժողովրդին ազատելու և բանվորա-զյուղացիական կարգեր հաստատելու նպատակով գրոհող հեղափոխական թուրքական բանակին: Մեզ սպառնում է նախ Հայաստանում, ապա, զուցե, Վրաստանում, հաղթական քեմալականության գործընթացի մեջ խեղովելը: Նոյնիսկ ընկ. Սղիվանին, չնայած քեմալականների մեջ կարճ ժամանակ մնալուն, ներշնչվել է Հայաստանի խորհրդայնացման նրանց ծրագրերով և այսօր առաջարկում է օգտագործել թուրքերի կողմից {Ալեքսանդրապոլում} ստեղծված «Խորհրդային Հայաստանի Հեղկոմը»: Մենք հայ-թուրքական հարցում ոչ մի որոշակի ծրագրային գիծ չունենք և սողում ենք իրադարձությունների պոչում»<sup>1</sup>:

Սյունիքում հիանալի հասկանում էին այս ողջ «բանվորա-զյուղացիական հեղափոխական հոկտոբրաբանության» արժեքը և շարունակում էին պաշտպանվել արդեն ոչ միայն

<sup>1</sup> РГАСПИ, ф. 64, գ.1, գ.21, թ. 252-254 (Барсегов, էջ262):

տեղական՝ զանգեզուրյան, կովկասյան և օսմանյան «բոլշևիկ» թուրքերից, այլ նաև արհասարակ բոլշևիկներից:

Հայաստանում դեկտեմբերի վերջին տեղի ունեցած «բոլշևիկյան հեղափոխությունը» փաստացի ռուսական հեղաշրջումը, և Հայաստանի խորհրդայնացումը չփոխեցին իրերի վիճակը: Չփոխեց ոչ Սյունիքում, ոչ ողջ Հայաստանում: Ալեքսանդրապոլում նստած օսմանյան թուրքերը շարունակում էին անպատիծ թալանել, կողոպտել և սպանել խաղաղ բնակչությանը: 1921-ի հունվարի 18-ին Խորհրդային Հայաստանի բոլշևիկյան իշխանությունները վերջապես ազատվում են «խաղաղաբարար բոլշևիկ քեմալիզմի հիպնոսից» և արտաքին գործերի ժողկումը ուշացած բողոքի նոտա է հղում Թուրքիայի Անկարայի կառավարությանը՝ Կարսում և Ալեքսանդրապոլում շարունակվող թալանի, բռնությունների, թուրք ասլյարների կողմից հայկական գյուղերի վրա անառիթ հարձակումների, բնակչության տեղահանության և նրանց ստրկական աշխատանքի քշելու վերաբերյալ: «...Թուրքական գորքերի կողմից օկուպացված ողջ տարածքում հայկական պետության ունեցվածքը յուրացվել և ուղարկվել է Թուրքիա, բնակչության անձնական սեփականությունը թալանվել է, անասունը խլվել է և բնակչության վերջին պաշարները բռնազրավվել են: Շրջանը դատարկվել է, ողջ անասնազիւաքանակը լրվել է, իսկ եզիպտացորենի հսկայական պաշարները ուղարկվել է Թուրքիա՝ տեղի բնակչությանը սովի և մահվան մատնելով: 18-50 տարեկան ողջ աշխատունակ տղամարդիկ ուժով քշվել են Սարիդամիշի և Էրզրումի ուղղությամբ՝ տաժանակիր աշխատանքի...»<sup>1</sup>: Ավելին, զեկուցագիր-տեղեկանք հիշեցնող այս «նոտանե դեպքերի ընթացքին որևէ ազդեցություն չէր կարող ունենալ: Թուրքերին զենք մատակարարող Խորհրդային Ռուսաստանը չէր համարձակվում (?) ուղղակիորեն դիմել իրենց դաշնակիցներին, և Զիշերինը նույն օրը ընդամենը Օրջոնոկիձեկին հանձնարարում է

<sup>1</sup> Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948, Anita L.P.Burdett (ed.), Archive Editions, 1998, էջ 824 (Բարսեղով, էջ 352-353), - <http://genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/1019-1052.htm>

առաջարկել Մդիվանուն թուրքերին բացատրել, որ Հայաստանը ծանրագույն աղետալի վիճակում է, իսկ «թուրքերը ոչ միայն չեն օգնում (Հ.Խ.) Եղբայրական խորհրդային հանրապետությանը, այլև շրջափակում, կողոպտում և սովոր են մատնում: Յուրաքանչյուր խորհրդային երկրի գործը մեր ընդհանուր գործն է, և մենք մեզ հավատարիմ չենք լինի, եթե անտարբերությամբ նայեինք Եղբայրական Խորհրդային հանրապետության կործանմանը»<sup>1</sup>: Այս գեղեցիկ խոսքերի տակ Եղբայրական Խորհրդային Ռուսաստանը շարունակում էր նայել, թե ինչպես են Եղբայրական խորհրդային թուրքերը շարունակում Եղբայրական Խորհրդային Հայաստանի թալանն ու բնակչության կոտորածները սպանելով «նույնիսկ հայ կոմունիստներին» : Արդյոք նրանց թվում էր, որ թուրքերը պետք է ընտրաբար կոտորեին հայերին): Դրա մասին դեկտեմբերի 19-ին Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Հ. Բեկարյանը տեղեկացնում է Թուրքիայի և Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմներին. «...ընդհատվող բռնություններ, կողոպուտ և խաղաղ բնակչության սպանություններ... Զեր օկուպացիոն ջոկատների ներկայացուցիչները Կարակիլիսայից եկած փախստականներին զանում են Կարսի Վրայով ուղարկել Էրզրում հարկադիր աշխատանքների... զինուած ասլյարների ջոկատները ներխուժում են հայկական գյուղերը, կողոպտում, սպանում բնակչությանը, բռնաբարում կանանց... Դեկտեմբերի 26-ին Քաֆտարին գիտում 36-րդ թուրքական գնդի մի ջոկատի տեղափորմանն օգնելու համար առանձնացված ինը երիտասարդ աշխատավոր կոմունիստներ (թվարկվում են անունները - Հ.Խ.) աշխատանքն ավարտելուց հետո գազանաբար սպանվել են ծղոտի պահեստում...»<sup>2</sup>:

<sup>2</sup> Съезд РГАСПИ, ф.85, г.14, о.105, п. 1-2об. Зрещинская Н. МИД СССР, Документы Внешней Политики СССР, Т.3 [ԽՍՀՄԱԳՎ: ԽՍՀՄ պատմին քաղաքականության փառադրուելը, Հ.3], էջ 484-487; Великая Октябрьская Социалистическая Революция,

Այդ ընթացքում ոռւս բոլշևիկները շարունակում են զենք ու մթերք մատակարարել թուրքական բանակին և միմյանց դիվանագիտական նամակներ գրում այն մասին, թե «...հարկավոր է թուրքերին ցույց տալ այն խորը հարվածը, որ կրում են խորհրդային կարգերը մթերքի թալանի հետևանքով: Դա որոշակիորեն հակահեղափոխական գործողություն է, Նուրի փաշայի 1918-ի հակախորհրդային կարգերի դեմ պայքարելու քաղաքականության վերսկսում» (Չիչերինը՝ Օրջոնիկիձեին)<sup>1</sup>, որ թուրքերի պահվածքը կործանարար է Հայաստանի համար, որ Խորհրդային Հայաստանում թուրքերի քաղաքականությունը հակախորհրդային բնույթի հակահեղափոխական գործողության միջազգային ակտ է (Չիչերինը՝ Օրջոնիկիձեին)<sup>2</sup> և այլն: Թուրքերին, անշուշտ, ամենաքիչ մտահոգողը իրենց գործողությունները հակահեղափոխական դիտարկելն էր, միաժամանակ անհայտ է, թե ով պետք է դա «թուրքերին ցույց տար»: Թուրքերի նպատակը մեկն էր՝ շարունակել զենք ստանալ Խորհրդային Ռուսաստանից, կոտորել հայերին և ճնշում գործադրել Հայաստանի սահմաններն իրենց ճաշակով գծելու համար:

Իրականում հաղթանակած թուրքերին իրենց վայրագությունները «ցույց տվողը» այդ ընթացքում Զանգեզուրում թուրքերին դիմադրող բնակչությունն էր: Դիմադրեցին մինչև վերջ: Մինչև Զանգեզուրի բնակչության կամքի հաղթանակը «վիճելի համարվող» տարածքներից միայն Զանգեզուրը մնաց Հայաստանի կազմում: Շատ թանկ զին վճարեցին դրա համար և դեռ երկար պիտի վճարեին, ինչի մասին խոսուն վկայություններ կան Գրիշա Մմբատյանի «Սյունիք. Պատմություն և հիշողություն» գրքում: Եզրափակենք դրանցից մեկով. «Շիկա-

էջ 492-493 (Բարսեղօն, էջ 354-356), - <http://genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/1019-1052.htm>:

<sup>1</sup>Տե՛ս ՐԳԱԾՓ, ֆ. 85, գ. С /Տուրցիա[Թուրքիա], գ.18, թ. 1-2 (Բարսեղօն, էջ 349), - <http://genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/1019-1052.htm>:

<sup>2</sup>Տե՛ս ՐԳԱԾՓ, ֆ. 85, գ. 14, գ. 111, թ. 1 (Բարսեղօն, էջ 365), - <http://genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/1053-1081.htm>:

հողում տեղական իշխանավորները տանել չկարողացան Բաբայան-Տեր-Գևորգյանց հոգևոր և ազնվական գերդաստանին: Թուրք դաշտի արածները պատմելուց հետո շիկահողի Արուսն անցնում է «հայ դաշտների» 1929-ի գործողություններին. «Խաղաղ պիտի ապրեինք, - լաց լինելով պատմում է Արուսը, - բայց հիմա եկել, հորս են կալանավորում, ձեռ ու ոտք կապում: Տանում են Խորայելի (Խորայելը մինչև վերջ Սյունիքի բնակչության համար կոված պապն է) ողջ մնացած զավակներից մեկին: ... Հորս տունը «տողկի» տվին: Տարան մեր մեծ դազանները, պղնձեղենը, գորգերը, կարպետները, տեղաշորը, պապիս ոսկե շղթայով գրապանի ժամացույցը, ոսկե օղերս, ... մատանիները, բոլորը հավաքեցին տարան: Տեղաշորն ինչու՝ տարան: Զարդեցին մորս սնդուկները, պատուեցին բարձերը՝ փետուրները շաղ տալով տներով մեկ: Խորայել պապս, աշխարհ տեսած, հազար բան տեսած, ապշած էր: Հետո մեր տուն մտան կոլխոզի նախագահն ու կուսքջի քարտուղարը: Երկուսով իրենց օգնականների հետ շուր տվին ամբարները, ցորենը թափ տվին ու տարան: Պապս աղաչում-պաղատում էր՝ մի քիչ ցորեն պահեք, էրեխները ո՞նց են ապրելու: Հետո հարձակվեցին գրադարանի վրա ու հրաման տվին, որ գրքերը կրեն կոլխոզի պահեստ «Դիտի վառենք քո գրքերը»: ... Մի քանի ժամից քշեցին տարան մերոնց երեք հարյուր ոչխարը, ինը կովը, վեց եզր, ջորիները, ձին: Չհանգստացան: Մի քանի օրից լսեցինք, որ կտրում են մեր թթենիները, անզամ զկեռի ծառերն են կտրում, որից վառելափայտ դուրս չի գալիս: Վերացրին հունոտն ու շլորուտը... Հետո այգին վառեցին: Եվ դա արեցին մեր գյուղի ջահենները... Պապիս վշտերին վերջ չկար: Մխիթարության համար նա գյուղի ծայրին երկու զոհված տղաների հիշատակին աղբյուր էր կառուցել տվել՝ քարե նավով, քարե ծորակով, սիրուն կամարով ու փոքրիկ խաչով, ճակատին էլ գրվածք կար: Շիկահողիք հարձակվեցին աղբյուրի վրա, ջարդեցին քարը, պոկեցին պատի խաչը, կեղտոտեցին շուրջը... Աղբյուրի ջուրն էին կեղտոտում: Պապս զնում մաքրում էր, իսկ նրան ծաղրուծա-

նակի էին ենթարկում, հայինում էին: Սրանք քրիստոնյա չեին, բարբարոս էին: Պապս՝ արդեն ծեր, ուժասպառ ու հոգնած, վախենում էր մոտենալ աղբյուրին: Տարիներ անց եղ կողմերով ձանապարհ պիտի անցկացնեին: Եղ մեծ գյուղից խելքը գիշին մեկը չկար, որ մի բան աներ, աղբյուրը փրկեր: Միայն, ասում են, երեխաներն էին անհանգստացած՝ բա աղբյուրը, աղբյուրն ի՞նչ է լինելու: Գոնե սրբատաշ քարերը հանեին, մի տեղ դնեին: Ճանապարհը հենց աղբյուրի վրայով տարան... Են սուրբ տղաների հիշատակը բաղեցին ասֆալտի ու բետոնի տակ ու հանգստացան: Սա վերջն էր, որով Խարայելի ու Զումշուրի գերդաստանի հետքերը ջնջեցին Շիկահող գյուղից: Մեր գյուղից, իրենց գյուղից...»: Գրիշա Սմբատյանն է հավելում.

«...Պղծվեց դաշնակցական և կոմունիստ եղբայրների ավագ եղբոր՝ Սուլթան Տեր-Գևորգյանցի հիշատակը: Սուլթանն այս գյուղի ամենալուսավոր կերպարն էր: Պահպանվում են նրա նամակները, որոնք հրաշալի ներկայացնում են 20-րդ դարակզբի Սյունիքը, ազգամիջյան թշնամանքը, բախումները, ժողովրդի սոցիալական թշվառ վիճակը, հույսն ու սպասումները: ...Եզակի հարուստ գրադարան ուներ՝ հարյուրավոր գրքերից բաղկացած... Եվ աշխարհի հեռավոր մի անկյունում՝ Շիկահող գյուղի «Յայտական տուն»-ի հրապարակում, հրկիզում էին Սուլթան Տեր-Գևորգյանցի թանկագին գրքերը, օրագրերը, ձեռագրերը և... մագաղաթի փոքրիկ ձեռագիր մի մատյան: Վրեժ էին լուծում... գրքերից: Դա 1937 թվականի հոկտեմբերին էր»<sup>1</sup>:

Վառողները հայերն էին: Երբ սա անում էին հարևան թուրքերը, ասում ենք՝ «արյան մեջ է թալանն ու սպանությունը», երբ անում ենք մենք հայերս, ասում ենք՝ «Ժամանակներն էին այդպիսին», «կարգադրություն էր», «ինքը չաներ, ուրիշն էր անելու»: Սյունիքի փրկության համար իրենց կյանքը ներդրողներից շատերը գրիվեցին խորհրդային արդարադատությանը, և մեղադրանքում գրվում էր նաև՝ «հայ-թուրքական կրիվներին մասնակցելու համար»: Սուլթան Տեր-Գևորգյանցի

<sup>1</sup>Սմբատյան Գ., Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, 2009, էջ 199:

(Արքայիկի) գրքերը վառեցին, բայց մնաց նրա տպագրված ժառանգությունը: Դրանք հիանալի նյութ են պարունակում 20-րդ դարասկզբի գյուղական մտավորականության արժեքները, ընթանումները, աշխարհը կալումը, փիլիսոփայությունը հասկանալու համար: 1906-ին «Ընկերոջ նամակները գյուղից» շարքում Արքայիկը գրում է. «Մի աւերիչ հասկացողութիւն է բուն դրել գիտացու գիտում՝ ծածկել, անվերջ ծածկել իր մեջ կատարող անլուր վայրագութիւններ, պահել, միշտ թաքցնել ամեն յանցանք. լոել ու բնաւ անունը չտալ գերեզմանի դուռը հասցնող մահառիթ վերքերի, տարիներ շարունակ գաղել այն բոլորը, ինչ հրապարակ պիտի հանել ու նշաւակել անեծքի որոտով. կեղծել, ստել այն ամեն զազիր արարքները, ինչ բանալ ու լեռնացած ցասումով պատժել պէտք է: Գիտի ո՞չ մի թերութեան մասին խօսել չի կարելի, այն համատարած խաւարում ծնուղ յանցանքի, յարածուն կեղտերի մասին ձայն չպիտի հանել. այնտեղ կատարող ամեն տեսակ ոճիր, անարգանք յաւիտենական գաղտնիք պիտի մնան դրսի աշխարհին ու յարատեն անվերջ... Մեր գաղտնիքը միշտ մեր մեջ պիտի մնայ. այդպէս են կամենում մեր մեծերը, այդպէս պահանջում մեր վարիչները, ասում են, այդ է հրամայում և մեր նամուսը... Այնտեղ, գիտում, գիտի վերքերի, տանջանքի աղբիւրների մասին կարելի է խօսել մուր անկիւններում, գիտական արիւնաբուների, նրանց արարքների անունը կարելի է տալ փսփսուկով, միշտ չորս կողմը խլըշկոտալով. Գիտի շահը այդ է պահանջում, այդ է ստիպում անել նոյն ինքը անհուն տառապանքի, անհաշիւ հրէշների մեծ զոհը՝ գիտացին... Եթէ կիամարձակւեն ...«խոսել» - օ, այդ ժամանակ ամբողջ գիտը հզօր թափով քո դէմ կկանգնի. կկանգնեն բոլորը, ...որ շշնչիւնով իրենց սրտի խստովանութիւնն էին անում, ... բոլոր բողոքաւոր կարծածները-ոտքի կելնեն քեզ խրատելու, քեզ դաս տալու գիտի օրէնքները քեզ սովորցնելու. ցոյց տալու քեզ քո չափը, բերնիդ սանձ դնելու... Կարելի է գողանալ, թալանել, վերջին պատառ հացը խլել թշւարի բերնից. կարելի է խեղդել, տարիներ տևող դանդաղ մահով հոգին հանել անտեր տնակին, ամեն միջոցներով ծծել տարին բոլոր անդրու տքնող ու միշտ քաղցած մշակին... ու անպատիծ մնալ. գիտը կպատժէ նրան,

ով գողին՝ գող, արիւնարբուին՝ արիւնարբու կանւանէ, կհալածէ նրան, որ լրին՝ լիրք, անամօթին՝ անամօթ կասէ. ով սեխն սև կկոչէ վայ նրան, ով խաւարի փեշը բարձրացրած՝ ապականւած կեանքը ցոյց կտայ. Գիւղը իր սոսկալի դատավճիռը պատրաստ ունի նրա համար, ով յախտենական ճահճը այլափոխելու երազը իրազործելու անմոռութիւնն ունի: Գիւղը այդպէս է պատժում» («Աշխատանք», 1906, N 41, էջ 8-9, N 42, էջ 11-12):

### ՀՐԱՍՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ